

## Ա.Զ.ԲԻ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

## ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐԲ ՀՕՐ

Ժամանակէ մը ի վեր, Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէքեան, բարեխնամ Պատրիարքը Ս. Սթոռոյս, կը տառապէր աչքի տեսողութեան նուազումէ, հետեւանք՝ cataract հիւանդութեան: Մասնագէտ բժիշկներ վիրաբուժական գործողութիւն յանձնարարեցին: Փետրուարի 27ին, Շաբաթ օր, Նորին Ամենապատուութիւնը մտաւ Հաստա հիւանդանոց եւ յաջորդ օրը ենթարկուեցաւ վիրաբուժական գործողութեան՝ Փրօֆէսէօր Շաուլ Մարինի ձեռքով:

Պատրիարք Սրբազանը չորս օրեր անցուց հիւանդանոց, որոնց ընթացքին Միաբանութեան անդամները, հայ եւ օտար անձնաւորութիւններ այցելեցին իրեն, ներկայացնելու համար ապաքինումի մաղթանքներ եւ յայտնելու իրենց ուրախութիւնը գործողութեան յաջող անցած ըլլալուն համար:

Մարտի 3ին, Նորին Ամենապատուութիւնը վերադարձաւ Ս. Աթոռ, ուրախութիւն պատճառելով Միաբանութեան եւ աշակերտութեան:

«Աիոն» այս առթիւ, ի դիմաց Միաբանութեան, կատարեալ ապաքինում եւ արեւշատութիւն կը մաղթէ իր սիրեցեալ Հոգեւոր Պետին:

## ՆՈՐԱՊՈՍԱԿ Տ. ԱՂԱՆ ԵՊՍ. ՊԱԼԻՕԶԵԱՆ ՄԵՐ ՄԷՋ

Ամագրիս նախորդ թիւով, Տ. Աղան Ծ. Վրդ.ի Աւստրալիոյ Հայոց Առաջնորդ ընտրուելուն առիթով, մեր շնորհաւորութենէն ետք «մտալուտ եպիսկոպոսացում» կը մաղթէինք իրեն: Ուրախ ենք հոս յայտնելու որ մեր այդ մաղթանքը վերածուած է իրականութեան: Կիրակի, 14 Փետրուար, Տեառնընդառաջի տօնին, ազգիս Վեհափառ Հայրապետը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում շնորհած է Հայց. Եկեղեցւոյ պաշտօնեաներէն չորսին: Հայր Աղանէն գատ, «Եկեղեցւոյ իշխանաւոր»ի բարձր պաշտօնին կոչուած են Անթիլիասի նախկին Միաբան եւ երկար տարիներ Նիւ Եորքի շրջանին մէջ պաշտօնավարող Հոգը. Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Կիզիլբանը եւ Մայր Աթոռի Միաբաններէն Լիոնի (Ֆրանսա) Հայոց Առաջնորդ Հոգը. Տ. Նորվան Ծ. Վրդ. Զարբանան ու Իրաքի Հայոց նորընտիր Առաջնորդ Հոգը. Տ. Աւագ Ծ. Վրդ. Ասատուրեանը:

Մայր Հայրենիքէն Աւստրալիա վերադարձի իր համբուն վրայ, Աղան Սրբազան պարտք համարեց այցելութիւն մը տալ իր «հոգեւոր տան»: Հասաւ ան Երուսաղէմ, Զորեքշարթի, 24 Փետրուարի իրիկուան մութին: Միաբանութիւն եւ աշակերտութիւն թափօր կազմած «Հրաշափառ»ով առաջնորդեցին Սրբազանը Եկեղեցւոյ արտաքին գաւիթէն Մայր Տաճար, ուր Ս. Գլխազրի մատրան մէջ իր ուխտը կատարելէ ետք անցաւ Եկեղեցւոյ դասը: Լուսարարապետ Տ. Գարեգին Արքեպս. բարի զալուստ մաղթեց իր երբեմնի օգնականին եւ փոխանորդին (յԱւստրալիա), որուն զգածուած շնորով պար

### ԿԵՆՆՔԸ ԺԱՌՆԳ. ՎԱՐԺԱՐԱՆԷՆ ՆԵՐՄ

Երզուշարթի, 4 Յունուարի կէտօրին, Ս. Ծնունդը — կամ Ծննդեան պահը — կանխող Առաջ Տօներու սկզբնաւորութեան, աշակերտութիւնը սկսաւ ձմեռնային իր արձակուրդին, որ տեւեց մինչև 27 Յունուար, Զորեքշարթի առաւօտ:

Լինդշարթի, 7 Յունուարի երեկոյեան, Ս. Սեփոնոս նորաստրկուազի տօնին առթիւ, վարժարանի սեղանաւան մէջ կայացաւ աւանդական ընթրիքը, որուն ներկայ եղան Ամեն. Սրբ. Գառիարք Լայրը և ուսուցչական կազմը: Վերապահուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպոսի խօսքէն ետք հրաւիրուեցաւ Տիար Սահակ Գալայճեանը, որ յանուն ուսուցչական կազմին ընէ աւուր պատշաճի խօսքը, որմէ ետք Տիրացու Արամ Ալեանեան կարգաց ուղղմէ՝ իր ստրկուազ եղբայրներուն կողմէ: Ապա Ստրկուազ—Ուրարակիրներ երգեցին շնորհակալութեամբ շարականը: Ընթրիքը վերջ գտաւ Ամեն. Ս. Գառիարք Լօր փոկման խօսքով և օրհնութեամբ:

Զորեքշարթի, 13 Յունուարի երեկոյեան ժամը 7ին, Ալեքս և Մարի Մանուկեան հանդիսարանին մէջ, Նոր Տարին դիմաւորուեցաւ աւանդական նախդիմաւորութեամբ: Ներկայ էր ամբողջ Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Ամեն. Ս. Գառիարք Լօր, ուսուցիչներ և Ս. Աթոռոյ պաշտօնեաներ: Լոնդէսը բացուեցաւ վարժարանի Գայլերգով — «Միրա ի սիրտ» — երգուած յոսնկայս, որմէ ետք վերապահուչ Գերշ. Տ. Շահէ Արքեպոս. ըբաւ բացման խօսքը, արտայայտուելով ժամանակի գաղափարին և դայն լաւագոյնս օգտագործելու կարեւորութեան մասին, ժող. ծաներ, դաշնակի ընկերակցութեամբ Սան Վաչէ Քաղաքեանի և առաջնորդութեամբ Երաժշտութեան ուսուցիչ Տիար Սահակ Գալայճեանի, խմբերգեցին Ալլա Փառուպանծալը: Ժող. Սան Շահան Էօզթէմիրեան օգրուածով արտասանեց «Ո՛րք Ֆեաց թանասեղծութիւնը: Ուսանողութեան կողմէ խմբերգուած Գուրգէն Ալեմշուի «Լայսատան»էն ետք, ժող. սաներ ներկայացուցին խիստ հետաքրքրական զաւելա՞մը՝ «Կօչկակար Սիմոն Աղայի Ծննդեան Տարեգարձը»: Դերուսոյցն էր Տիար Ալեքս Գալայճեան: Ապա ընդհանուրի քրքիչին ու հետաքրքիր նայաւածքին ընդմէջէն սրան ժամանեց կողմնոր Գալուկը, որ բազմելով որահին կեդրոնը, նախ կատարեց ընթերցումը բանաստր կաղանդէճներուն և յետոյ իր երեսմ նուէրի բաժնիներէն բաժաւ հանեց բոլորին: Գառիարք Ս. Լօր փոկման խօսքով և օրհնութեամբ վերջ գտաւ սուրբալի այս երեկոյթը:

Լինդշարթի, 21 Յունուարին, ուսանողները պատշաճ կացին դէպի Մեռեալ ծով, ուր շատ հաճելի ժամեր անցուցին, վերադարձի ճամբուն վրայ, անոնք ելան երիբօլի Մասակայքը գտնուող Փորձութեան լեռը և այցելեցին Յունաց վանքը:

տասխանեց նորապսակ Սրբազանը, իր գոհունակութիւնը յայտնելով վերստին Ս. Աթոռ գտնուելուն համար եւ հաղորդելով բոլորին Ն. Ս. Օծնութեան հայրական ողբոյնները: Յետոյ Միաբանութեան հետ ըարծրացաւ Գառիարքարան, Ն. Ամն. Վօտ:

Գերշ. Տ. Աղան եպոս. մէկ շաբաթ մնաց Ս. Աթոռ: Ժամանման վաղորդայնին, վարդանանց տօնին, հանդիսաւոր Ս. Գատարազ մատոյց Մայր Տաճարի Առաջ Սեղանին վրայ: Իսկ յաջորդ օրը գլխաւորեց դէպի Ասորւոց Վանք, տարեկան իրաւունքի Գատարազի մատուցման մեկնող Միաբանական Թափօրը: Եղաւ նաեւ խարտաւիլակը քահանայական ձեռնադրութեան:

Իր մեկնումի նախօրեակին (Գշ., 2 Մարտ), Սրբազանը, Լայ Երիտ. Միութեան սրահին մէջ, խիստ հետաքրքրաշարժ բանախօսութիւն մը տուաւ Սեստրալիոյ Լայ գաղութի կազմաւորման ու ներկայ վիճակի մասին:

Կը կրկնե՞ք այս առթիւ մեր նախորդ համարին մէջ ըրած մաղթանքները, Առաջնորդ Սրբազան Լօր բարօր ու բեղմնաւոր պաշտօնագրութեան ի խնդիր: